ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
Քարաձորի համայնքապետարան

N 39 02 հունիսի 2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն Ա.Նալբանդյանին

Կից Ձեզ եմ ներկայացնում համայնքի ղեկավարի N 11-Ա որոշումը:
Առդիր՝ 1 էջ:

Համայնքի ղեկավար Ա.Մատինյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք, հասցե Լոռու մարզ գ.Քարաձոր
հեռախոս 093395661 էլ. փոստ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» մայիսի 2017 թվականի N 11-Ա

ԱՃՈՒՐԴ - ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով, 68-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Քարաձոր համայնքում 2017 թվականի մայիսի 22-ին կայացած աճուրդի թիվ 1 արձանագրությունը՝

որոշում եմ.

1.Հաստատել Լոռու մարզի Քարաձոր համայնքում 22.05.2017 թվականին կայացած աճուրդի թիվ 1 արձանագրությունը և աճուրդում հաղթող ճանաչված Մանվել Արշակի Ալավերդյանին սեփականության իրավունքով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող 06-109-0202-0059 ծածկագրի 0.30275 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողամասը աճուրդում առաջարկված առավելագույն գնով՝ 49500 ՀՀ դրամ:

2.Պարտավորեցնել Մանվել Արշակի Ալավերդյանին տաս օրվա ընթացքում վճարել հողամասի արժեքը և կնքել առուվաճառքի պայմանագիր:

3.Հողամասի պետական գրանցում կատարելու համար կատարվող ծախսերը իրականացնել գնորդի միջոցների հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՄԱՏԻՆՅԱՆ

2017թ. մայիսի 29

գ.Քարաձոր